նը ինչ ճանչնամ, կուրծքերնին Ե-ՖՐ- չունէին որ հանկնայի որ կողմէն ըլլային. միայն կոիւ ը-նողները ով որ էր՝ զանոնք ձեռքակալեցի։

Մատեան Թիւ 79

—Խաղիւղի դրանոցին համար Օգոստափառ Ինքնակալին անցեալները մատուցուած աղերսա-գիրը ընդունելով Նորին Վ.Եհ.փառութիւնը, յի-շեալ որբանոցին Մայիս 2էն սկսեալ ամէն օր եօթն ու կէս հօխա միս և 15 հօխա հաց շնոր-հել բարեհաճեր է։

Մեր հրապարակական խորին շնորհակալութիւնը կը յայտնենք թէ ընդհանուր ազգին և թէ յի-շեալ որբերուն կողմանէ։

Նոյն Թիւ 87

ԲԵՐԱՑԻ ՀՐԴԵՀԸ

Սոսկալի հարուած մը, որուն նմանը կրնանք ըսել թէ երբէք տեսնուած չէր, կիրակի օրը Բերայի մեծ և ընդարձակ թաղն աւերակաց կոյտ մը դար-ձուց, զոհ տանելով եօթն հազար կտորէն աւելի շէնք, անբաւ ինչք, և որ ամենէն սարսափելին է, հինգ վեց հարիւր*) ալ հոգի։

Ժամ վեց ու կէսին սկսաւ Թաքսիմին ետևի կողմը Գէրիտիէ ըսուած փողոցը դոց տունէ մը, որուն բնակիչները տեղ գացած էին, և արևել-եան բուռն հովէն իսկոյն ծաւալելով, անհնարին արագութեամբ հարիւրաւոր տուներ մէկէն բռնեց և ընդարձակածաւալ հրեղէն հոսանքի մը նման ընթանալով, մէկ ծայրը Թաքսիմի ետևէն դէպ 'ի մեծ փողոցը, միւս ծայրը դէպ 'ի վար, Եէնի շէ-հիր և Փափազ Քէօրրիւսի ըսուած թաղերը, մէկ ծայրն ալ մէջ տեղէն դէպ 'ի Քրնամուլա, Թար-լա պաշի և Գալիոնճու – գուլլուք քալեց այնպիսի արագութեամբ՝ որ բնակիչները զարհուրելով շը-ւարուած ինչ ընելիքնին կորուսին. շատերը չկրցին կարասի փախցնել և հաղիւ հոգինին աղատեցին. շատեր ալ կարասի փախցնել ուզելով ինքզինք-նին չկրցին աղատել և անյաղ բոցին ճարակ ե-ղան։

Բաղմաթիւ անձինք ալ այրոց օգնութեան դի-մելով իրենց կեանքը զոհեցին. շատեր ալ՝ մանա-ւանդ կանայք և մանկունք փախուստի ճամբա՛ չգտնելով այրեցան. ուրիշներ ալ՝ կամ փրլա-տակներուն ներքև մնացին կամ պատուհաններէն նետուած կարասիներու ներքև ջախջախեցան, Այսպէս ահելի աւերածով հրդեհը քալեց հա-սաւ շիտակ ճամբէն մինչև Եէնի—Զարշիի փողո-ցին անկիւնը, և Մոբոսի սրճարանէն ասդին, մէջ-տեղէն մինչև Թէբէ-պաշի, և միւս կողմէն մին-չև Գասըմ – փաշա ընդարձակածաւալ հրեղէն դաշտ մը թողլով իր ետևը։

Ահագին քարուկիր տուներ ու շէնքեր՝ որք հրդ-եհի դէմ ապահով պատսպարաններ կը կարծո-ւէին, Անգլիոյ դեսպանատունը, Նաուսի թատրո-նը, Լիւքսամբուրկ, Հասունեանի կամթոլիկոզա-բանը և ասոնց նման ուրիշ բաղմաթիւ հոյակապ քարուկիր շէնքեր աւերակ դարձան։

Վ.Եհ.Սուլթանն անձամբ Բերա երթալով և քանի մը ժամ Գալաթա—Սարայի վարժարանը կենալով՝ անդադար հրամաններ կը ղրկէր նախա-բարաց՝ որ հրդեհին առաջքն առնելու համար ա-մէն ճիգ թափեն. և արդարև մարդկային կարո-ղութենէ վեր ջանքեր եղան. բայց ո՞վ կրնար հովին բռնութիւնն արգելուլ և բոցերուն կատաղութեան առջև դիմանալ, որք մնչելով յառաջ կը քա-լէին, և առջևնին եղած շէնքերը՝ մանաւանդ փայ-տէ շէնքերն ակնթարթի մէջ կը լափէին։ Ի՞նչ կրնային ընել այսպիսի ահեղ և բուռն տարրի մը դէմ Կ. Պոլսոյ խեղճ ջրհանները՝ որք տղայական խաղալիկ են՝ քան թէ հրդեհ մարելու գործիք։ Ի՞նչ կրնային ընել ամենէն աւելի անձնուէր մար-դիկ՝ թէ և բանակ մ'ալ կազմած ըլլան, առանց այն հզօր միջոցներն ունենալու, որք Եւրոպիոյ մէջ հրդեհի համար խորհուած ու պատրաստուած են, և՝ որոցմէ մէք զուրկ ենք։

Դիշերուան ժամ ութին վերջապէս մէկ ծայրը

(*) Այս Թիւը մինչև մայիս 27 գտնուածներուն եւ յայտնուածներուն Թիւն է, իսկ միւս լրագրաց մինչ 35-ն յունիսի տուած տեղեկութիւններէն կիմանամք, որ հրոյ ճարակ եղող եւ այլ զանազան ցաւալի դէպքերու զոհ գացող անձանց Թիւը մինչեւ 1500 — 1600 հասած է։

Ծան. խմբ. Արարատ։

Գասըմ փաշայի ձորին մէջ և միւս ծայրն ալ Ղալաթա Սարային վարի փողոցին անկիւնը մարեցաւ։

Այրած գլխաւոր շէնքերուն կարգն են Ղալաթա Սարայի պահականոցը, Բերայի եկեղեցւոյն բոլոր դպրոցները, կալուածներն ու տուները՝ բաց 'ի Այքաղարէն, Լատինաց Երրորդութիւն եկեղեցին, Վենետիկի, Վիէննայի և Անտօնեան միաբանութեանց դպրոցները, Հալէպցիներուն եկեղեցին, եայլն եայլն։

Երկուշաբթի առաւօտ ժամը երեքին միջոցները Սաքըզ-աղաճի կողմը՝ մէջը կարասեօք լցուն աղատած քարուկիր տուն մը մէջէն բռնկելով այրեցաւ։ Նոյն առաւօտուն՝ այրած տան մը պատը փլչելով՝ քանի մը մարդ տակը մնացին։

Այրած վիրաւորուած և ջախջախուած հոգիներուն թիւը որոշ չգիտցուիր, բայց մինչև հիմա գտնուած դիակները հինգ հարիւրէն աւելի են կըսուի։ Մինակ Գալեօնճու-Գուլլուղիի առջև վաթսուն եօթանասուն այրած դիակ գտնուեր է։ Սրտակտուր տեսարան։ Մայրեր իրենց զաւակներուն, եղբայրներ ու քոյրեր իրարու փաթթուելով այրած, ամբողջ ընտանիքներ մէկէն այր..ծ, քանի մը ջրհան ամբողջ ջրհանակիրներով այրած, Կաթոլիկ վարդապետ մը, Կ. Ամբրոսիոս Մաղաքեան, տունէն դուրս ելած ժամանակ հրդեհին մուխէն խեղդուելով մեռեր է։ Պալեան Յակոբ պէյին սպասաւորը և Տիվիթեան Գէորգ աղայի մէկ որդին այլոց օգնութեան դիմած ժամանակնին վրանին փլատակ իյնալով ջախջախուեր մեռեր են։ Շատ ընտանիքներ՝ իրենց բոլոր գոյքը կորսնցնելէ ետև, որը հայրը, որը զաւակը, որը եղբայրը, որը կինը, որը այրը կորուսած է։ Վերջապէս այս հըրդեհը հրդեհ չէր, այլ կարգէ դուրս և նմանը չըտեսնուած ու չըլսուած հարուած մ'էր, պատուհաս մ'էր։

Գտնուած դիակները Յունաց գերեզմանատունը և Թաքսիմի ղըրանոցին առջև դրուելով, տէրերը ելածները տէրերուն կը յանձնուէին, և չելածները Ֆէրի— Քէօյ տարուելով կը թաղուէին

Հրդեհին գիշերը Բարձր. Մեծ Եպարքոսը, Սպարապետը, Ներքին գործոց և Ոստիկանութեան պաշտօնեայները կարգէ դուրս անձնուիրութեամբ մինչև վերջը աշխատեցան ու յոգնեցան։ Ս. Պատրիարք հայրն ալ Գեր. Երեմիա եպիսկոպոսին հետ Բերա ելեր էր, բայց անցնելու ճամբայ չգտնելով Ղալաթիոյ եկեղեցին գացեր նստեր էր. և առաւօտուն կանուխ Բերայի եկեղեցւոյն խորհրդարանն երթալով, ուր դիմեր էին նաև Քաղաքական Ժողովոյ ատենապետ Վսեմ. Ապրօ էֆէնտին, և ատենադպիր Մեծ. Եուսուֆեան Տիգրան էֆէնտին, թագրիրներ գրեց Մեծ Եպարքոսին, Թօփհանէի Միւշիրին և Բերայի քաղաքապետական ժողովոյ նախագահին, և հրկիզելոց համար վրան և պարէն խնդրեց. միանգամայն մերազգի հրկիզեալ խղճալեաց պէտք եղած օգնութեան ու պաշտպանութեան համար մասնաժողով մ'ընտրեց հետևեալ յարգի անձերէ.

Եղիազարեան Յովհաննէս էֆէնտի
Քաֆավեան Մանուէլ ,,
Եղիազար Կէտէեան ,,
Մուրատեան Մ. Մաղաք ,,
Քազազեան Յակոբ ,,
Մերնէմզուլի Յարութիւն ,,
Աշըճեան Աւետիս ,,
Վարդանեան Յովհաննէս ,,
Նէվրուզեան Արեղիկ ,,
Ունճեան Արիկ ,,
Սեննեքերիմ Սերոբեան ,,

Կայսերական կառավարութիւնը փութաց անմիջապէս Բերայի զօրանոցին ախոռներն ու յարդանոցները պարպել և գետինը տախտակամածներ և սենեակի ձևով տախտակորմներ շինել տալով տասն հազար հոգի պարունակելու տեղ պատրաստել. Նոյնպէս վրաններ կանգնելով՝ փողոցներըն ու լեռները մնացած հազարաւոր հոգիները պատսպարել տուաւ։ Անկէց զատ 8000 հօխայ հաց, 250 հօխայ կարագ եղ, 15000 օխայ բրինձ և լապտերներ ու մոմեր բաժնեց. Նմանապէս քանի մը հարիւր հատ ջրի սափոր և շատ մ'ալ գաւաթ ղըկեց. մերկերուն համար ալ հանդերձ պատրաստել կուտայ այսօր բաժնելու համար։

Մասիս. Թիւ 976

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.